

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի, Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միսկայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն, Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԳՆԿՈՒԹԻՒՆ

Հովանաւորող մարտ և բանտները.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պաշտօնական տեղեկութիւններ խօսքայի մասին. Նամակ բաժնումից. Նամակ Սըղ-նախից. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՎԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ներքին. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱՆԴԻՆՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆՆԱՍԻՐԱՎԱՆ, Վիեննայի երաժշտական և թատերական ցուցահանդէս:

ՀՈՎԱՆԱՐՈՂ ՄԱՐՏ ԵՒ ԲԱՆՏՆԵՐ

«Մշակի» № 82-ի մէջ, խօսելով մեր բանտներին դրոշմեան մասին, մենք ասեցինք որ կառավարութիւնը կարող էր չը լծող տալ պարսկահայաստան և լինելքահայաստանի մահաճետական մշակներին անդադար պանդխտել ուստաց սահմանների այս կողմը, ինչպէս որ Ամերիկայի հիւսիսային հանրապետութեան կառավարութիւնը արգելեց չինացի բանտներին զաղթել զէպի Ամերիկայ: Մենք մեր ասածը դրանով էինք պատճառաբանում, որ օտարահայաստանի մահաճետական բանտները, մանաւանդ պարսիկները, վերին աստիճանի սակաւագէտ լինելով իրանց մրցութեամբ տեղական բանտներին հետ իջնում են այդ վերջինների օրավարձը մինչև աներեւակայելի minimum, որ կարող է ձեռնառն լինել մեր գործարանատէրերին, բայց անտարա-կոյս կորսաբեր է մեր բանտներին հա-մար: Բացի արանից պանդխտ մահաճետ-կան մշակներին տարել իր կենցաղավարու-թեան մէջ վերին աստիճանի կեդոտ լինե-լով իր ներկայութեամբ մեր երկրի այլ և այլ արդիւնաշահ քաղաքներում, ինչպէս Թիֆլիս, Բաքու, Բաղդադ, Երևան և այլն, վարակում է օղբ, ջուրն ու հողը և ա-մենավտանգաւոր հիւանդութիւնների ա-մենահաստատ տարածող է հանդիսանում մեր երկրի մէջ:

ԲԱՆՏԱՍԻՐԱՎԱՆ

ՎԻԵՆՆԱՅԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՒ ԲԱՆՏՆԵՐԻ ՑՈՒ-ՑԱԶՄԱՆԵՍ

Վիեննայի երաժշտական և թատերական ցու-ցահանդէսը թէև մայիսի 7-ին բացված, բայց շա-րունակ նորանոր յաւելումներ է ունենում և բացման ժամանակի պակաս կողմերը հնազանդե-լուցում են: Այժմ արդէն ամեն առաքելայ այն-տեղ ցուցակադրված և բացատրված է: Փակման ժամանակն է հոկտեմբերի 9:

Ցուցահանդէսը զետեղված է Պրատերի ահալին այգում, 1873-ի տիեզերական ցուցահանդէսից մնա-ցած չինութիւններում: Ամենից առաջ մտնում էր ցուցահանդէսի avenue, որի երկու կողմը կարգով շարված են արձարաններ, ճաշարաններ, պան-թեոններ, պալիլոններ. մէջուղը ծաղկանոց, պաւան և այլ դարձաբանք և այսպէս գնալով avenue-ն վերջանում է Rotonde-ի վրա, ուր հաս-տատրված է բուն ցուցահանդէսը: Rotonde-ի քովն է երաժշտական ընդարձակ սրահը: և ուղիղ դի-մացին է միջադպայն թատրոնը: Rotonde-ը չորս մեծ մուտք ունի, հիւսիսային, արևելեան, արե-մտեան և հարաւային: Հայկական բաժինը դրված է հարաւային մուտքի քով: Ցուցահանդէսն ունի դանադան կարգադրված մասնաժողովներ և ի միջի ալլոց նաև տիկնանց—մասնաժողով (Damen-Comite), որի նախագահը ընտանանցի մի հայ կին է, կոմսուհի Կիլմանսեգ (Kielmannsegg), որի ամուսնից Ստորին Աւստրիայի կառավարիչն է (Statthalter): Կոմսուհին պատկանելով Վիեննայի ամենաբարձր շրջանին, մեծ դեր է խաղում այս-տեղ, ինչպէս պատմում են և ամեն այսօրինակ ձեռնարկութիւններում մասնակից և հովանաւո-րող է լինում: Հիտաբերականն այն է, որ կոմ-

«Մշակի» № 82-ի առաջնորդ յօդ-ւածի լոյս տեսնելուց յետոյ, մենք առիթ ունեցանք ոմանց կողմից առաւելութիւններ լսել, թէ մեր առաջարկութիւնն անիրա-գործելի է և թէ կառավարութիւնը ոչ մի իրաւունք չի ունենայ այդ տեսակ կարգա-դրութիւն անելու:

Նախ մենք պնդում ենք որ ամեն կառա-վարութիւն իրաւունք ունի, ինչպէս և ա-րդէն է հիւսիսային Ամերիկայի հանրապե-տութեան կառավարութիւնը, արդեւի մի փնտաւար տարրին անցնել իր սահմանները, մանաւանդ երբ իրաւ կը հաստատվի կը ստուգվի, թէ օտարահայաստանի մահաճետ-կան բանտներին տարրը փնտաւար է մեր երկրի համար թէ անտեսական և թէ ա-ռողջական (սանիտարական) տեսակէտից:

Առ այժմ թողնելով խնդրի առողջական (սանիտարական) տեսակէտը, որը, կրկնում ենք, այնու ամենայնիւ ամենանշանաւորն է երկրի միայն տարածման միջոցին, կուզե-նայինք քննել խնդիրը միմիայն անտեսական կողմից:

Ոչ դր չէ ուրանում կառավարութեան իրաւունքը երկրի խոշոր արդիւնաբերողնե-րի, գործարանատէրերի, ֆաբրիկաների շահերը արտասահմանեան ապրանքների վրա դրվող բարձր մաքսերով պաշտպանե-լու: Այդ տեսակ մաքսը անուանվում է հովանաւորող մաքս: Եւ իրաւ, կառա-վարութիւնն ուղեւորով որ պետութեան ներքին արդիւնաբերութիւնն առաջ գնայ, զարգանայ, ծաղկի, նրա զարգացումը հո-վանաւորելու համար ահալին մաքս է նշա-նակում օտար երկրներին բերվող նոյնա-նման ապրանքների վրա, որպէս զի այդ վերջինները անկարող լինեն մրցել հայրեն-իքի արդիւնաբերութիւնների հետ: Այժմ հարցնում ենք. եթէ կառավարութիւնը իրան կատարելա իրաւունք է համարում

հովանաւորել արդիւնաբերութիւնը, ի՞նչի նա իրաւունք չը պիտի ունենայ հո-վանաւորել աշխատանքը: Եթէ կառա-վարութիւնը կարող է պետութեան մէջ եղած փոքրակիւ հարուստ արդիւնաբերող-ների շահերը պաշտպանել իրանց համար վտանգաւոր մրցութեան դէմ, ի՞նչի նա չէ կարող իր հպատակ բաղմամբ չքա-ւոր դասի, բանտներին ամենատարրական շահերը (քիչ թէ շատ օրինաւոր օրավար-ձը և առողջութիւնը) օտարահայաստանի բանտներին մրցութեան դէմ պաշտպա-նել:

Կրկնում ենք. եթէ կառավարութիւնը կարող է հովանաւորել արդիւնաբերու-թիւնը, ի՞նչի նա չէ կարող հովանաւորել աշխատանքը: Առաջինը դանդաղ է դուսնա-րատելների մի նեղ խմբի ձեռքում, իսկ երկրորդը, այսինքն ձեռքի աշխատանքը, կատարում է պետութեան մէջ ապրող մի ընդարձակ դասակարգ, որի անտեսական անբաւարար վիճակը աննպաստ հետեւանք-ներ ունի և ամբողջ երկրի համար. նախ բանտը, ամբողջ օրը բանտով և ստանա-լով աննշան օրավարձ, միջոց չունի քիչ թէ շատ մարդկային կերպով ապրելու, միջոց և ժամանակ չունի դրազիտութիւնը սովո-րելու, մտաւորապէս բժանում, գրեթէ անանական դրոշմեան է հասնում. իսկ մենք Խուսաստանում նորերումն պատահած տխուր անցքերից, խօսքայի առիթով, տե-սանք թէ որքան վտանգաւոր է բանտը դասակարգը տգիտութեան մէջ թողնելու: Երկրորդ բանտը տարրի աշխատանքը ո-րոշ օրինաբանութիւն հովանաւորված, պաշտ-պանված չը լինելով, և բանտը իր մարդ-կային արժանաւայելի վիճակը կորցնելով կեղտոտ, խոնավ, անառողջ կացարանի մէջ ապրելով, վատ կերակրվելով, անմաքուր ջուր խմելով, ցնցոտիներով ծածկելով իր

մարմինը,—ամեն տեսակ ցաւերով է հի-ւանդանում և այդ բանտը, մշակ դասն է, որը դանդաղ է երկրի մէջ ամեն տեսակ վտանգաւոր տարախոսքի, վարակիչ հիւան-դութիւնների բուժը և տարածողը... Այս-պիսով այդ տարրը ակամայեց հանդիսա-նում է ամեն տեսակ էպիդեմիաների մի մշտական սպառնալի առատ աղբիւր և երկրի ունեւոր դասակարգերի համար էլ: Պետութիւնը և երկրի ունեւոր դասակար-գերը թողնելով բանտը դասակարգը տնտե-սապէս անապահով դրոշմեան մէջ, իսկ ֆի-զիկապէս և մտաւորապէս անասական վի-ճակի մէջ իրանց համար աննկատելի կե-րպով միշտ վառ են պահում երկրի համա-ձարակման ահալին կր աւարտանք...:

Գրութիւնը աւելի էլ վտանգաւոր է դառնում, երբ բացի տեղացի բանտը տնե-տեսապէս անապահով դասակարգից, երկրի անդադար լցվում է մահաճետական տարրի պէս օտարահայաստանի, գրեթէ մուրալկան բանտներով: որոնք ոչ թէ միայն իրանց սակաւապետութեամբ իջնում են անդալի մշակների օրավարձի գինը, ոչ թէ միայն իրանց կեղտոտ կենցաղավարութեամբ վա-րակում են իրանց շուրջը դանդաղ օղբ, ջուրն ու հողը,—բայց և իրանց անբարո-յական կենսելով, իրանց քայքայված բարձ-ր փառքերով, իրանց զապաւային, անզուսպ ինտանկաներով բարոյապէս փչացնում են տեղական տարրը, և իրանց հարեանու-թեամբ ապրողներին մի մշտական վտանգ են ներկայացնում, քանի որ այդ մահաճետ-կան մոնեռնը տարրի շրջանում միշտ ան-պակաս են լինում ամեն տեսակ յանցանք-ների կոչի, բռնաբարութիւն, դաշնյով վերջ հասցնելը, գործութիւն, աւազակութիւն և մարդապանութիւն:

Գ. Ա.

սուհի կիլմանսեգ թէև հայերեն չը գիտէ, բայց չէ մոռցած իր հայ ծաղանն և նոյնը յիշում է միշտ: Մինչև իսկ եթէ Կարա-Մուրզայի խոսքն այստեղ դար և դժուարութիւններ մասնակցի, կարելի էր կոմսուհու միջնորդութիւնը խնդրել, մի աղբիւրի յայտնի անձի միջոցով, օրինակի համար դեր. Այսինքն արքայականութիւն, և յոյս կայ, որ կոմսուհին իր աղբիւրութեամբ կը յաջ-ղենք հայ խմբի ձեռնարկութիւնը: Եւ կոմսու-հին տեսայ Միջադպայն թատրոնում, ուր տրվում էր մի նոր և շատ չքեղ մեծ բալետ, որ մեծ ա-ջողութիւն է դատած այստեղ Die Donaunixe (Դանուբի յաւերժանաւոր): Տիկնիւր յայտնի կեր-պով պահած է իր արեւելեան տիպը:

Ցուցահանդէսի հարաւային մուտքի մօտ կայ օտարներին սրահը, որ փառաւոր կերպով դար-դարված է և ուր կարելի է հանգստանալ և նա-մակներ գրել ամեն կողմ ցուցահանդէսի պատ-կերով թղթերի վրա: Այս սրահի արտաքին պա-տերի վրա ամեն լեզուով յայտարարութիւն կայ, այս յայտարարութիւնները շարված են կարգ-կարգ, իւրաքանչիւր կարգում 4 լեզու: Այս կար-գերի մէջտեղն է հայերէն յայտարարութիւնը՝ խոշոր, կարմիր գրերով «Օտարներու սրահ»:

Հայերէնի տակ գրվին են հոնդարերէն, իտալերէն և արաբերէն: Հայերէն յայտարարութիւնը տղած են Միւլիթարեանները: Բացի դրանից նրանք են տուած նաև իրանց տպարանից, տասնեակ արեւելեան լեզուներ (ի մէջ որոց և ռուսերէնի) տառերը:

Ցուցահանդէսում հայկական բաժինը զոյգվելու է առած հետեւեալ կերպով: Ցուցահանդէսի յանձնաժողովը դիմել էր Միւլիթարեան միա-բանութեան քանի մի հին լատիներէն գրքեր ուղելով նրանից: Բայց այդ գրքերը միաբա-նութեան մատենադարանում չը կային, և այդ առիթը Արքայադրը, գեր. Այսինքն, առա-ջարկել էր յանձնաժողովին հայկական բաժին

ունենալ ցուցահանդէսի երաժշտական բաժնում: Ցուցահանդէսի յանձնաժողովը երեք մեծագէտ կասկածելով թէ հայերն էլ կարող կը լինին «երաժշտական միջադպայն ցուցահանդէսին» ի-րանց կողմից, իրանց արտադրութիւնից լուրջ մի բան ներկայացնել, դրաւոր հանաւորութիւն տալուց առաջ, յանձնաժողովի անդամները մէկին, պրօֆ. Մանտուանի միջոցով կանխապէս քննել էին Միւլիթարեաններին ներկայացնել ուղած իրեղները և երբ տեսել իսկոյն ուրախութեամբ ընդունել էին: Պրօֆ. Մանտուանին մի լաւ դասախօսու-թիւն էր լսել արեւել. Այսինքն հայկական երաժշտութեան և մասնաւորապէս եկեղեցական երգեցողութեան ծագման, դարձաբան և ընթաց-քի մասին և յետոյ ամենայն ինչ կարգադրել ցու-ցահանդէսի մէջ:

Մանկավ ցուցահանդէսի հայաւային դուսից, ձախ կողմը խոշոր տառերով վերնագիր է հանդի-սւում, որի վրա կարգադրվում է Armenischer und Griechischer Kirchengesang (հայ և յունական եկե-ղեցական երգեցողութիւն): Հայկական և յունա-կան բաժինները միացված են մի կարգի վրա և ցուցահանդէսի X, XI, XII և XIII մասերն են կազմում: X մասը միայն յունական է, XII և XIII մասերն ամբողջապէս հայկական, իսկ XI-ի էլ մէկ մասը հայ, միւսը յոյն: Ցունական բաժնի մէջ էլ մաս ունեն Միւլիթարեանները, դնելով այն-տեղ 3 կտոր յունական խաղերով ձեռագիրներ, որոնք միայն են այդտեղ և որոնց վրա երեւում է մի մեծ կնիք «Մատենադարան Վիեննայի Միւլիթարեանց»: Նոյն բաժնում կան նաև 2 հատ հին սլաւոնական լեզուով գրված եկե-ղեցական երգեցողութիւն տղեալ գրքեր, 2 զիւր էլ կան սերերէն, 10 հատ միայն կան բուն յունական, որոնց մէջ նշանաւոր է մի գիրք, որի կէտը յունարէն և կէտը արաբերէն է (ձեռա-գիր № 88): Եւ այսպէս յունական բաժնի մէջ իրանք, յոյները անձամբ ոչ մի մասնակցութիւն

չեն ունեցած, այլ նոյնը կազմած և յառաջագրած են հնորիւ Վիեննայի կայսերական և Միւլիթա-րեանց թանգարանների:

Բուն հայկական բաժինը, ինչպէս ասինք, դրա-ւում է ցուցահանդէսի XII, XIII մասերն ամբող-ջապէս և XI-ի կէտը: Միւլիթարեան միաբանու-թիւնն այնպէս է կարգադրել այս բաժինը, որ այնտեղ երևում է հայկական երգեցողութեան և երաժշտութեան պատմութիւնը, (գործիքակնոք պակաս է դժբախտաբար)—սկսեալ ժ.Ա. դարից մինչև մեր ժամանակը, ժամանակագրական կար-գով, որով և ցոյց է տրվում նրա ընդարձակ սահմանները, վառն դի այս գործը շարադրված են դանադան տեղեր, ինչպէս, Ամուրեղամ, Թրի-եստ, Վենետիկ, Վիեննա, Երուսաղէմ, Էջմիածին, Կ. Պոլիս և այլն, որով երևում է նաև հայ տպա-գրութեան կարեւորութիւնը ընթացքը և յառաջա-դիմութիւնը՝ նրա գիւտից անմիջապէս յետոյ:

Եւ եւրոպացիք, Վիեննայի և Բերլինի յայտնի պրօֆէսորներ, տեսնելով ի ցոյց դրված գործերը, չեն ծածկած իրանց զարմացումը, որ հայերն երաժշտական երգեցողութիւնը, որ մեղ անմասն զարկին մէջ միայն նմանութեամբ մօտենում է յունական և ասորականին և որի հետեւողութեամբ այս նմանութիւնը շարադրակվել է մինչև հիւսիս, թէև հայը միշտ պահած է իր որոշ գոյնը, և թէ այս երաժշտութիւնն ունեցած է սխառեմաւոր իր ընթացքը, ձայնագրված և նոյն իսկ որոշ կանոն-ներով դրաւորապէս լուստարանված և տառարկված ի հուռց: Եւ որովհետև մեր եկեղեցական երգեցո-ղութիւնը քրիստոնէութեամբ չէ սկսած, այլ ան-կասկած շարունակված է հեթանոսական ժամա-նակից, ուստի և դրանով մասամբ խնդր է յա-րուցվում նաև հայոց կուսադաւորութեան ժամանա-կի ձայնական երաժշտութեան էութեամբ մասին:

(Կը շարունակվի)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԽՕԼԵՐԱՅԻ ՄԱՍԻՆ

Թիֆլիսի Միջաշէկեան հիւանդանոցում օգոստոսի 12-ին առաւօտեան կային խօշորայով հիւանդաներ 5 տղամարդիկ և 7 կանայք, օրվայ ընթացքում աւելացողներ չեն եղել, դուրս է դնացել հիւանդանոցից 1 տղամարդ—Պարսմանաշէկի մեռել է 1 կին—Աստուածատուրեանց օգոստոսի 13-ին առաւօտեան Միջաշէկեան հիւանդանոցում մնացել էին 4 տղամարդիկ և 6 կանայք:

Բօրչալուի գաւառի «Ծալկա» անուանված տեղում զետեղված գիւղական հասարակութիւնների մէջ, Եպիֆանիայի սկսվելուց մինչև օգոստոսի 6-ը հիւանդացել են 362 հոգի, մեռել են 183, առողջացել են 145, մնացել են 34 հոգի:

Թիֆլիսի գաւառապետը հաղորդում է օգոստոսի 12-ից, որ կրկին հիւանդացել են Մարաբա գիւղում 5, առողջացել է 1, մեռել են 2, Մալխազովի գ. հիւանդացել է 1, Պատարձեւի գ. հիւանդացել են 3, մեռել է 1, Սաքարէջի գ. հիւանդացել է 1, մեռել է 1, Ախալօսի գ. հիւանդացել է 1, Բեթլեհեմի գ. հիւանդացել է 1, մեռել է 1, Կոլխի գ. հիւանդացել է 1, Մանգլի գ. հիւանդացել է 1, մեռել է 1 հոգի:

Ախալքալաքի գաւառապետը հաղորդում է օգոստոսի 9-ից և 10-ից, որ Ախալքալաքում օգոստոսի 7-ին հիւանդացել են 1 կին և 2 տղամարդիկ, երեքն էլ օգոստոսի 8-ին մեռան, ուրիշ հիւանդացողներ չը կան: Ախալքալաքի գաւառի գիւղերում օգոստոսի 1-ից մինչև 9-ը հիւանդութեան հետեւալ դէպքեր են եղել. Ասպինձա գիւղում հիւանդ. են 2, առողջ. են 2, մեռել են 2, հիւանդներ չեն մնացել. Լալիկէի գ. հիւանդ. են 11, առողջացել են 8, մեռել են 3, մնացել է 1 հիւանդ. Ներքին-Օշարա գ. կրկին հիւանդացել են 50, առողջացել են 30, մեռել են 18, մնացել են հիւանդներ 2, Վերին Օշարա գ. հիւանդացել են 55, առողջացել են 39, մեռել են 14, մնացել են 2. Խոնավա գ. հիւանդացել են 10, առողջացել են 4, մեռել են 5, մնացել է 1. Մուսիի գ. հիւանդացել են 17, առողջացել են 7, մեռել են 9, մնացել է 1. Զօչիլիի գ. հիւանդացել է 1, մեռել է 1, հիւանդներ չը կան. Խոնավի գ. հիւանդացել են 3, մեռել է 1, մնացել են 2 հոգի:

Սքնախի գաւառական բժիշկը հաղորդում է, որ Վերին-Մախառանի խաւօքներում օգոստոսի 10-ին 15 հիւանդներ կային և 3 մեռնողներ. հիւանդութեան այդպիսի սաստկութեան պատճառը բժիշկը չբոլոր ջրերն է համարում:

Ախալքալաքի գաւառապետը հաղորդում է օգոստոսի 11-ից, որ խօսքի գիւղում օգոստոսի 10-ին և 12-ին հիւանդացել են 4, մեռել է 1, կարին գ. առողջացել է 1, Գումարի գ. հիւանդացել են 8, առողջացել են 5, մեռել են 2. Խելթիի գ. հիւանդացել են 2, առողջացել են 6, Շաղիլի գ. առողջացել է 1, մեռել է 1, Կոնդուրի գ. հիւանդացել են 4, առողջացել են 4, մեռել են 2. Վաղիսի գ. հիւանդացել են 5, առողջացել են 7, մեռել են 2, Չանգուրի գ. հիւանդացել են 10, առողջացել են 5, մեռել է 1, Վարկի գ. հիւանդացել են 2, մեռել է 1. Տիկա գ. հիւանդացել է հոգի: Կրկին խօշորա և յայտնվել Բալիս գիւղում, հիւանդացել են 2, մեռել են 2, Գօմի գ. հիւանդացել են 3, Չգրաշի գ. հիւանդացել են 3 հոգի. Կոնամեն գիւղերում մնացել են հիւանդներ 60, քաղաքում 1.

Գօրու գաւառապետը հաղորդում է օգոստոսի 11-ից, որ Գօրիում օգոստոսի 9-ից մինչև 11-ը հիւանդացել են 3, մեռել են 2, Բուխի գ. օգոստոսի 8-ին հիւանդացել են 3, մեռել է 1. Ուրբիսի գ. հիւանդացել է 1. Բօրօմում օգոստոսի 9-ին հիւանդացել է 1, մեռել է 1 հոգի: Օգոստոսի 2-ից մինչև 9-ը մեռել են՝ Սաղբէրի գ. 2, Յիւրի գ. 1, Ախալքալաք գ. 3, Տրա գ. 2, Յիւրի-Ղալարի գ. 1 հոգի: Օգոստոսի 7-ից մինչև 9-ը հիւանդացել են՝ Գեղի գ. 6, մեռել են 4, Պատարա-Մէջլիսի գ. մեռել է 1 հոգի: Օգոստոսի 5-ից մինչև 9-ը հիւանդացել են Ախալքալաք գ. 8, մեռել են 10. Չէմօ-Խանդակի գ. հիւանդացել են 14, մեռել են 8, Չօչեւի գ. մեռել է 1, Գօմի գ. հիւանդացել են 2, մեռել են 2, Վինկիի գ. հիւանդացել է 1, մեռել է 1. Կոլխի գ. օգոստոսի 8-ից մինչև 10-ը հիւանդացել են 8, մեռել են 3. Գեղի-Միւղորի գ. հիւանդացել են 3, Անդրկովկասեան երկաթուղու

Գօրի կայարանում հիւանդացել է 1. Սուրամում մեռել է 1 հոգի:

Թիֆլիսի զինուորական հիւանդանոցում օգոստոսի 12-ին առաւօտեան կային խօշորայով հիւանդներ 14 հոգի, օրվայ ընթացքում աւելացել է 1, առողջացել են 3 հոգի: Օգոստոսի 13-ին առաւօտեան մնացել են հիւանդներ 10 հոգի:

Բազուի նահանգապետը հաղորդում է, որ օգոստոսի 10-ին Բազում հիւանդացել է 1, մեռնողներ չեն եղել, մնացել են 9. զինուորական հիւանդանոցում 12: նահանգում, բացի երկու գաւառներից, որոնք տեղիկութիւններ չեն հասցրել, հիւանդացել են 72, մեռել են 48, առողջացել են 6, մնացել են 65 հոգի:

Բուխալիսի զինուորական նահանգապետը հաղորդում է, որ օգոստոսի 10-ին հիւանդացողներ և մահվան դէպքեր չեն եղել, մնացել են հիւանդներ 5. նահանգում հիւանդացել են 11, մեռել են 2, առողջացել են 3, մնացել են 36 հոգի:

Երևանի նահանգապետը հաղորդում է, որ օգոստոսի 9-ին Երևանում հիւանդացել են 30, մեռել են 36, առողջացել են 20, մնացել են 148. նահանգում հիւանդացել են 286, մեռել են 240, առողջացել են 79, մնացել են 1067 հոգի:

Ղարսի նահանգապետը հաղորդում է, որ Ղարսում հիւանդացել են 26, մեռել են 8, առողջացել են 2, մնացել են 25 հոգի:

Ջաբաթլուի շրջանի գլխավորը հաղորդում է, որ շրջանում հիւանդացել են 40, առողջացել են 19, մեռել են 78 հոգի:

Բազուի նահանգական վարչութիւնը հաղորդում է, որ Բազում հիւանդացել է 1, մեռնողներ չեն եղել, հիւանդներ մնացել են 10. զինուորական հիւանդանոցում 12, նահանգում հիւանդացել են 95, մեռել են 58, առողջացել են 17, մնացել են 53 հոգի:

Դաշտանի զինուորական նահանգապետը հաղորդում է, որ օգոստոսի 10-ին և 11-ին Շուրայում հիւանդացել են 4, մեռել են 2, առողջացել է 1, մնացել են 16 հոգի. շրջանում հիւանդացել են 952, մեռել են 348, առողջացել են 564, մնացել են 626 հոգի:

Նխաւեուպոլի նահանգապետը հաղորդում է, որ օգոստոսի 10-ին և 11-ին Նխաւեուպոլում հիւանդացողներ չը կային. նահանգում հիւանդացել են 171, առողջացել են 81, մեռել են 107, մնացել են 118 հոգի:

Երևանի նահանգապետը հաղորդում է, որ օգոստոսի 10-ին Երևանում հիւանդացել են 38, մեռել են 35, առողջացել են 18, մնացել են 133. նահանգում, բացի երեք գաւառներից, հիւանդացել են 62, մեռել են 52, առողջացել են 2, մնացել են 1074 հոգի: Նախիջևանի և Շարուրի գաւառներում հիւանդութիւնը չառ թուլանում է. Նախիջևան քաղաքում բոլորովին վերացել է հիւանդութիւնը:

Գուրթալիսի զինուորական նահանգապետը հաղորդում է, որ օգոստոսի 11-ին Գուրթալիսում հիւանդացել են 4, մնացել են 9, նահանգում հիւանդացել են 9, մեռել են 2, մնացել են 43 հոգի:

Ղարսի զինուորական նահանգապետը հաղորդում է, որ Ղարսում հիւանդացել են 16, մեռել են 4, մնացել են 36. շրջանում երկու օրվայ ընթացքում հիւանդացել են 111, առողջացել են 38, մեռել են 48, մնացել են 157 հոգի:

Ստալիբոյի նահանգապետը հաղորդում է, որ Ստալիբոյում հիւանդացել են 4, մեռել է 1. նահանգում հիւանդացել են 233, մեռել են 65, առողջացել են 155 հոգի:

Ջաբաթլուի շրջանի գլխավորը հաղորդում է, որ շրջանում հիւանդացել են 22, առողջացել է 1, մեռել են 16, մնացել են 83 հոգի:

Թիֆլիսի Միջաշէկեան հիւանդանոցում օգոստոսի 13-ին կային 4 տղամարդիկ և 6 կանայք. օրվայ ընթացքում ոչ հիւանդացողներ են եղել և ոչ առողջացողներ:

Ջինուորական հիւանդանոցի խօշորային բաժնում օգոստոսի 13-ին կային 12 հիւանդներ, աւելացել է 1 հոգի: Օգոստոսի 14-ին մնացել են 13 հիւանդներ: Առողջացել է 9-ը քաղաքա. Ալէքսանդր Մէտեխեոյի:

Պարսից խօշորային հիւանդանոցում օգոստոսի 13-ին կային 2 հոգի. նոյն ամիս 13-ին տարել են հիւանդանոց 1 հոգի, առողջացել է 1, և օգոստոսի 14-ին մնացել են 2 հոգի: Օգոստոսի 14-ին խօշորայով հիւանդացել է և թողված է իր ընտանիքում բժշկվելու 1 հոգի:

Սքնախի գաւառի Վերին-Մախառանեան խաւօքներում օգոստոսի 11-ի գիշերը հիւանդացել են 15, մեռել են 2, մնացել են 28 հոգի: Ախալքալաք քաղաքում կար 1, հիւանդացել է 1, առողջացել է 1, մնացել է 1 հոգի. գիւղերում.— Արազի գ. կային 20, առողջացել են 12, մնացել են 8. Խօսպի գիւղում կային 7, հիւանդացել են 2, առողջացել են 4, մնացել են 5. Գումարի-Մի գ. կային 10, հիւանդացել են 2, մեռել են 3, մնացել են 9. Խելթիի գ. կային 6, հիւանդացել են 2, մնացել են 8. Կոնդուրա գ. կային 5, մեռել է 1, մնացել են 4. Կօրկ գ. կային 5, հիւանդացել է 1, առողջացել են 3, մեռել է 1, մնացել են 2. Օրդա գ. կային 5, հիւանդացել է 1, առողջացել են 2, մեռել են 2, մնացել են 2. Վաղիսի գ. հիւանդացել են 7, մեռել են 2, մնացել են 5. Շաղիլի գ. հիւանդացել է 1, մնացել է 1. Չանգուրի գ. հ. են 4, մեռել են 2, մնացել են 2. Մերեկի գ. հ. են 1, մեռել է 1 հոգի: Գօրու գաւառի Յիւրիսի գ. օգոստոսի 6-ից մինչև 12-ը կային 60, հիւանդացել են 10, առողջացել են 32, մեռել են 10, մնացել են 8. Չէմօ-Նիկո-զի գ. կային 10, հիւանդացել են 5, առողջացել են 8, մեռել են 4, մնացել են 3 հոգի. Բիւլմօ-Նիկոզի գ. կային 5, հիւանդացել են 4, առողջացել են 5, մեռել են 2, մնացել են 2. Շիւրիի գ. կային 17, հիւանդացել են 20, առողջացել են 10, մեռել են 12, մնացել են 15 հոգի. Պիւլէ-նիսի գ. կային 5. հիւանդացել են 10. առողջացել են 5, մեռել են 5, մնացել են 5. Խելթի գ. կային 6, հիւանդացել են 4, առողջ. են 6, մեռել են 2, մնացել են 2. Սիւրի գ. կային 3, հիւանդացել են 11, առողջացել են 3, մեռել են 6, մնացել են 5. Գլգլիի գ. կային 4, հիւանդացել են 5, առողջացել են 3, մնացել են 2 հոգի. Թամարաշի գ. կային 5, հիւանդացել են 6, առողջացել են 4, մեռել են 3, մնացել են 5 հոգի: Ախալքալաքում օգոստոսի 10-ին հիւանդացել և մեռել է 1 մարդ: Թիֆլիսի պրիստաւութեան Մամիկոյ գիւղում հիւանդացել են 2 կանայք, 1-ը մեռել է: Յուլիսի 15-ից մինչև օգոստոսի 1-ը Վարդի-Ուրանի գ. կային 3, հիւանդացել են 10, առողջացել են 8, մեռել են 5 հոգի. Բօյսէրի գ. հիւանդացել են 13, առողջացել են 2, մեռել են 11 հոգի:

Բազուի նահանգական իշխանութիւնը հաղորդում է, որ օգոստոսի 12-ին Բազում հիւանդացողներ չը կային, մեռել է 1, մնացել են հիւանդանոցում 9, զինուորական հիւանդանոցում 12. նահանգում հիւանդացել են 88, մեռել են 48, առողջացել են 15, մնացել են 59 հոգի:

Դաշտանի զինուորական նահանգապետը հաղորդում է, որ օգոստոսի 12-ին Շուրայում հիւանդացողներ չեն եղել, մեռել է 1, մնացել են 15. շրջանում հիւանդացել են 298, մեռել են 136, առողջացել են 230, մնացել են 1558 հոգի:

Նխաւեուպոլի նահանգապետը հաղորդում է, որ օգոստոսի 12-ին Նխաւեուպոլ քաղաքում հիւանդացողներ չեն եղել. նահանգում հիւանդացել են 137, առողջացել են 41, մեռել են 81, մնացել են 117 հոգի:

Երևանի նահանգապետը հաղորդում է, որ օգոստոսի 11-ին Երևան քաղաքում հիւանդացել են 37, մեռել են 22, առողջացել են 2, մնացել են 146. նահանգում հիւանդացել են 477, մեռել են 272, առողջացել են 98, մնացել են 1181 հոգի:

Ղարսի զինուորական նահանգապետը հաղորդում է, որ Ղարսում հիւանդացել են 11, առողջացել են 2, մեռել են 4, մնացել են 41 հոգի:

Գուրթալիսի զինուորական նահանգապետը հաղորդում է, որ օգոստոսի 12-ին Գուրթալիսում հիւանդացել են 3, մեռել են 4, առողջացել է 1, մնացել են 7, նահանգում հիւանդացել են 4, մեռել են 2. մնացել են 45 հոգի:

Ստալիբոյի նահանգապետը հաղորդում է, որ Ստալիբոյում հիւանդացել է 1, մեռնողներ չը կային: Նահանգում հիւանդացել են 678, մեռել են 391, առողջացել են 233 հոգի:

Ջաբաթլուի շրջանի գլխավորը հաղորդում է, որ շրջանում հիւանդացել են 7, առողջացել են 3, մեռել են 8, մնացել են 79 հոգի:

ՆԱՍԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

Յուլիսի 25-ին Անցեալները մի անգամ տեղիո հայոց ուսումնարանների նախագահ-հոգաբարձուն միտք էր յայտնել, որ ուսումնարանները հաստատ եկամուտի աղբիւր չունենալուն համար աւելի լաւ կը լինէր, որ մի քանի տարով փակվէին: Այդ տեսակ մի տարրիկով առաջարկութիւն ժողովրդի մէջ առաջ բերեց և տրուեց և հետաքրքրութիւն, որի պատճառով հայր նախագահը ստիպված եղաւ ժողովրդին ժողովի հրահրելու: Ժողովը էր կողմնորոշված ժողովի հրահրելու: Ժողովը էր կողմնորոշված ժողովի հրահրելու: Ժողովը էր կողմնորոշված ժողովի հրահրելու:

Մասնագիտով այն եղբայրացութեան եկաւ, որ ուսումնարանները իրանց եկամուտներով հանգիստ կերպով կարող են կառավարվել: այն դուռը, որ եկեղեցին պիտի տար ուսումնարանին և որը չէր ուղղում տալ, որպէս թէ փող չը լինելուն պատճառով, յայտնվեց, որ եկեղեցին կարող էր տալ մասնաւոր կերպով այդ մարդիկ նայելով եկեղեցական տեսակներին դառն էին նրա մէջ ահազին դեղձմանիւր, որոնք, ինչպէս ինքը յարգելի երեսօրեանն էլ յայտնեց, կատարվել են առանց իր գիտութեան, ուրիշներ, ձեռքով... ուսով հրաժարական տուեց:

Որքան էլ ժողովրդի համար ցանկալի լինէր, որ այդ տեսակները մասնաւոր զինվէին, որքան էլ առաջարկութիւնը եղան, որ նոր ընտրված եկեղեցական հաւատաններին իրաւունք տրվէ այդ հաշիւները զննելու, այդ անկարելի եղաւ, որովհետեւ թէ տեղ-պատանդին քահանայն, և թէ գործակալ հայր Գալիլէյ այդ չը ցանկացան և թող չը տուին. մինչև անգամ այդ տեսակները, որոնք ուսերէն լեղումը գրված էին, մէջոնցիկ վերցնեցան և ինչպէս ասում են նորերը պատրաստում են... Գալիլէյի մէջ աւելացան, որ նայն քահանայների միջամտութեամբ անցեալ երեսօրեանին ընտրութեան ժամանակ, հակառակ օրինաց, թող չէին տուած հաշիւներն ու ընտրել, երեսօրեանի խաթրին չը դիպչելու համար երեւի:

Ինչ իրաւունքով եկեղեցական վարչութիւնը, կամ աւելի լաւ ասել է տեղ-պատանդին քահանայն, որովհետեւ Բաթումի եկեղեցական ամիս դրածը զանով են այդ վերջինի ձեռքում, պահանջում են, որ հասարակութիւնը չարունակէ փող տալ եկեղեցու շինութեան համար, երբ տասնեակ տարիներ է, որ ժողովրդը հաղաթներ է տուել, առանց երբեք հաշիւ ստանալու և արդիւնք տեսնելու...

Մենք տուրութիւնը չունենք այդ տեսակ մեղ եկեղեցու և երեսօրեանական կեանքին յատուկ երեւոյթներ մասին թղթակցութիւններ. դրեւու, սակայն երբ ոտից մինչև գլուխ դեղձմանիւր մէջ թափախված այդ հասարակական փողեր ուսողները յանդգնում են սխալից դիմել կեղծ խնդրադրերով իրանց տեղը լայնացնելու համար, երբ առաջարկում են կրկին մի ուր և է լայնաբեր լայնացնելու համար: Երբ այդ պարտականութիւնն ենք համարում նախադրեալացնել սխալին սխալների մէջ չընկնելու:

Այն խնդիրները, որոնք դնացել են միտքի անուամբ տեղ Կոստանդինի և իր խմբի անունից մենք համարում ենք հետեւեց մտք ինտրիգաների և եթէ սխալը ցանկութիւնն ունի արդարեւ թիւումը վճռել այդ հարցը, թող նա մի զննելու դարկի Բաթում, թող այդ զննելու հաւաքի հաւաքակցութիւնը և երես ատ Երես խմբաց նրա կամը. թող նա քննել եկեղեցական հաշիւները, թող նա պահանջ եկեղեցու շինութեան համար հաւաքված փողերի մանրամասն հաշիւը, թող

զանազան իրանց այժմեան տեղերի և կառավարության մէջ: Անդեալ յոսիս ամսին Բազումի նահանգական դատարանի սահմանադրութեան ըստինքն պիտի ընդհանրապէս Ղուբա դատարանի բոլոր կառավարութեան զործը: Սակայն դրոշմ յետադիւրից և դատարանի անդամները մին եկաւ Ղուբա դատարանի հոգիւրը շրջելու և սահմանները նկարագրելու համար: Լսում ենք որ Ղուբայի այդեմերը, որոնք թղթեր (զօկու-միւսներ) չունեն հիմաւոր ժամանակներէ, Բակինո-Կուբինսկի շրջանի դատարանի օրերից և ձեռք են գցել հոգիւրը քաղաքիս շրջակայքում, որոնց վրա և այգիներ են տնկել,—այդ տեսակ այգիներէրից կը խլեն իրանց այգիները: Խալով որ վերջիշեալ հին դատարանից ստացած ունեւը դօկումէնտներ, նա միայն իրաւունք կունենայ շարունակել օգտուիլ իր հոգիւրից և մշակել այգիին սեփականութեան իրաւունքով:

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են, որ օգոստոսի 7-ին այդ քաղաքի Շիրալիդ կոչված տեղում մշակները հող քանդելու ժամանակ, հողի աճաղին կոչուր թափվում է և սպանում է երեք թուրք բանակ-ներին, իսկ չորրորդին կարողանում են հողի տա-կից կրտսմու գրութեան մէջ հանել:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ Մոսկովայի գերմանական կօթնիայի աւադները ճաշ տուին ի պատիւ պրօֆէսոր Բուզովի վեր-լսովի: Առաջինը վերլուծել կենացն առաջարկեց ընկերութեան փոխ-նախագահը: Վերջում առա-ջարկեց Մոսկովայի գերմանական կօթնիայի կե-նացը: Պ. Համանէման իր ճառում շնորհաւորեց վերլուծիչ Բուզովին համալսարանի ընկերուր դառ-նայր: Վերջում չընդունեց այդ շնորհաւորութիւնը ասելով, որ ինքն դեռ ևս տեղեկութիւն չէ ստա-ցել ընկերուր պաշտօնի մէջ իրան հաստատելու մասին, և առաջարկեց հիւրասէր Ռուսաստանի կենացը, այդ կենացը հիւսցմունքով ընդունվեց: Այսօր կեսօրին վերլուծիչը որդու և ուրիշ ան-ձերի հետ միասին այցելեց Ֆրիդլիւմ-Վիլհելմի և Վիկտորիայի ապաստարանը: Վերջում դափնեայ պատկեր դրեց Ալեքսանդր II կայսրի և Վիլ-հելմ I-ի արձանների վրա:

Մեր խմբագրութեան մէջ ստացվեց պ. Խ. Մա-լումանից ժողովրդական ընթերցանութեան հա-մար խմբագրած մի նոր գրքի, «Արեգակի և լուսնի խաւարումը» վերնագրով, որ կազմել է Վ. Լուսինիչի: Գրքը իր գովու շատ մատչելի է—նա արժէ 5 կոպէկ: Գրքիցը զարդարված է մի քանի պատկերներով:

«Արձագանքը» մի տխուր լուր է հաղորդում.— Թաւրիզի հայոց առաջնորդ Ստեփաննոս եպիսկո-պոս Մխիթարեան մեռել է խօլէրայով:

Ստացանք Կ. Պոլսում տպագրած մի գրքի, «Գարնան հովիտ» վերնագրով. դա ստանաւորնե-րի մի ժողովածու է, հեղինակութիւն Մկրտիչ Ա-ճէկեանի: Տպագրված է ներկայ 1892 թ.ին և արժէ 5 դրու:

«Հրատարակչական ընկերութեան» հրատարա-կութեամբ լոյս տեսաւ Գօգօլի յայտնի գրութեան «Տարաւ Բուլլայի» հայերէն թարգմանութիւնը, որը կատարել է Մ. Արեգեան: Գրքի գինն է 40 կոպէկ:

Մեզ գրած մի նամակից, ինչպէս և «Արձագան-քի» հաղորդած մի լուրից երևում է, որ Թիֆլիսի կօնսուլատի պաշտօնապէս հեռագրով չէ տե-ղեկացրել թեմի զանազան յաջորդներին թեմական առաջնորդի մահվան մասին, այնպէս որ թեմի շատ քաղաքներում լրագիրներից են իմացել ա-ռաջնորդի մահվան լուրը:

Լսում ենք, որ Նաթլուղի գիւնուորական հի-ւանդանոցը, բժշկապետ Մալինիկի շնորհով, պահ-վում է օրինակելի կարգ ու կանոնով: Այցելուներ-ի վրա հիւանդանոցը ուրախալի սպասարկութիւն է թողնում:

Ինչպէս լսել է «Կաւբաշ» լրագիրը, մի քանի բժիշկներ և ֆելդշէներ Բազումի նահանգից տե-

ղափոխվում են Երևանի նահանգը, ի նկատի ու-նենալով որ Բազումի կողմերում խօլէրան արդէն թուլացել է, իսկ Երևանի նահանգում նա առա-տիկ կտորածներ է անում:

Օգոստոսի 12-ին Թիֆլիսում միայն մի գէպը և եղաւ խօլէրային հիւանդութեան:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆՎԻՍ

Հեռագիրներից արդէն յայտնի է մեր ընթեր-ցողներին, որ Գլադստօնի նոր մինիստրութիւ-նը կաղնակներով լի է բացառապէս Գլադստո-նի համակարծիք անդամներից:

Պաշտօնապէս լրագիրները առանձնապէս շեշ-տում են «համակարծիք» բառի վրա, կամենալով դրանով ասել, թէ Գլադստօնի նոր մինիստրութիւ-նը այնպիսի անձինք են, որոնք դուրս են ինքնուրոյ-նութիւնից և հլու հպատակ Գլադստօնին, այն-պէս որ իւրաքանչիւր հարցի ընթացքում ժամա-նակ իսկապէս մինիստրի անձնաւորութիւնը նշա-նակութիւն չէ ունենալու, այլ ամեն բան կախ-ված կը լինի առաջին մինիստրի կամքից:

Ընդհակառակն, ազատամիտ կուսակցութեան լրագիրները ապացուցանում են, որ նոր մինիստ-րութեան այնպիսի անդամները, որոնք սըր Հար-կօտ, լորդ Կլիմքլէյ, Ռիպսոն, Սպենսեր և Հեր-շել, ամենքին յայտնի և փորձված պետական անձինք են, իսկ ընկած մինիստրութեան անդա-մները յայտնի էին իրանց անընդունակութեամբ և նրանով, որ ստիպար կատարում էին Սոլսբրիի հրամանները:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԿԵՐ

—Լոնդոնից հեռագրում են, որ Անգլիայի ա-րտաքին գործերի նոր մինիստր Բոլդերի Մեծ-Բրիտանիայի դեսպաններին և ներկայացուցիչներին ուղարկեց մի շքանշանական հեռագիր, որով յայտ-նում է, թէ անգլիական քաղաքականութիւնը կա-տարելապէս խաղաղասէր ուղղութիւն կունենայ, ցանկանալով բարեկամական յարաբերութիւններ պահպանել բոլոր պետութիւնների հետ:

—Հռոմում, բազմաթիւ գէթօկրատական ընկե-րութիւնների ներկայացուցիչներին ժողովում մեռել են ազիտացիա սկսել սահմանադրութեան առա-ջին յօդուածը, այն է թէ կաթօղիկութիւնը պե-տական կրօն է, ոչնչացնելու համար: Բացի դրա-նից մեռել են աշխատել, որ տարրական կրթու-թիւնը աշխարհային բնաւորութիւն ունենայ:

—Պոտսդամից հաղորդում են, որ այդտեղ տե-ղի ունեցող դորալադի պատճառով Վիլհելմ կայս-րին տուած ճաշի ժամանակ, կայսրը առաջարկե-լով աւաղիկական կայսրի կենացը, ասեց, որ իր և Ֆրանց-Յոսէֆի կայսրի մէջ եղած դաշնակցու-թիւնը ամենայնուայի դրաւական է եւրոպական խաղաղութեան:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 օգոստոսի: Երէկ Աբասթու-մանում բացվեց Ռուսաստանում առաջին լու-նային աստղաբաշխական օբսերվատորիան, որ կառուցված է Մեծ Խչկան Գէօրգի Ալեքսանդ-րովիչի միջոցներով: Այսօր գալիս է Պետերբուրգ վերլուծիչ պատիւ որի այստեղի բժիշկները վա-ղը մի ճաշկերպի կը տան: Պետերբուրգում օ-գոստոսի 10-ին և 11-ին հիւանդացան 95, մեռան 33, առողջացան 37:

ՀԱՄԲՈՒՐԳ, 12 օգոստոսի: Այստեղ եղած խօ-լէրային հիւանդութիւնների թոււը տեղի ունե-ցան նոյնպէս և ասիական խօլէրայի դէպքեր:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 օգոստոսի: Հրատարակված է ուկրա՝ այժմեան 25-րդ լրագրից թղթադրամը փոխարինել նոր տեսակի թղթադրամով. դեռ ևս որչափ չէ փոխարինութեան վերջնական ժամա-նակամիջոցը: Հրատարակված է որ ժամանակա-ւորապէս բաց կը թողնուի 25 միլիոն ռուբլու թղթադրամ, ոսկու արժողութեամբ: Երկաթու-ղային կոնդէսի անդամների պատւին երէկ տեղի ունեցաւ ճաշկերպի Պալլոմիսով երէկ օտար

պետութիւնների կոնդէսի ներկայացուցիչները գնացին Պետերսբուրգ՝ պաշտօնական ընդունելու-թեան համար: Երէկ այստեղ եկած պրօֆէսոր Վերլուկին՝ այստեղի բժիշկները կայարանում սի-րալիւր ընդունելութիւն ցուց տուին: Ուսում-նարանական տարակց սկիզբը յետաձգած լինե-լու պատճառով, արքունական երկաթուղիների վարչութիւնը թող տուեց որ չորրորդ ամիսն էլ ոյժ ունենան ուսույթիչների և աշակերտների արտո-նաւորված տոմսակները՝ վերադարձի համար: Պետերբուրգում օգոստոսի 11-ին և 12-ին հիւան-դացան 111, մեռան 32, առողջացան 43:

ՆԻՃՆԻՆՈՎՈՐՈՂ, 13 օգոստոսի: Տօնավա-ճառը տեսնելու համար Մոսկովայից եկան միջադ-դային գիտական կոնդէսի մի քանի անդամ-ները:

ԲԵՐԼԻՆ, 13 օգոստոսի: Համբուրգից խօլէրան անցել է հարևան Ալսոն քաղաքը, որտեղ երէկ հիւանդացան 80, մեռան 5. Համբուրգում մինչև երէկվայ օրը մեռել են 75:

ԲՐԻՒՍՍԵԼ, 13 օգոստոսի: Խօլէրան Անտվեր-պենում սաստկանում է, անցեալ օրը մեռան 5 հոգի:

ԱԹԷՆԻ, 13 օգոստոսի: Պաշտօնապէս յայտա-րարված է, որ յետ են կանչվում յունական դե-պանները Պետերբուրգից, Բերլինից, Պարիզից, Վիեննայից և Հռոմից:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 օգոստոսի: «Нов. Время» լրագիրը հաղորդում է, որ պրօֆէսոր Վերլուկ երէկ այցելեց ռուսաց գիւնուորական մինիստրին. կրում էր նորերս շնորհված ռուսաց ժապաւնը: Պրօֆէսորը նայեց քաղաքային հիւանդանոցները: Երէկ Փրանսիական դեսպանը երեկոյթ տուեց երկաթուղիական կոնդէսի անդամներին: Բժիշկ ուսանողներից շատերը, որոնք գնացել էին խօլէ-րայով վարակված տեղերը, վերադառնում են Պետերբուրգ. նրանց օգնութեան կարօտութիւն այլ ևս չը կայ: Պետերբուրգում օգոստոսի 12-ին և 13-ին հիւանդացել են 103, մեռել են 24, ա-ռողջացել են 47 հոգի:

ԲԵՐԼԻՆ, 14 օգոստոսի: Պնդում են, որ այս-տեղ մեռել է մէկ կին ասիական խօլէրայից:

Խմբագիր-Հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԻՆԻՆ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՄԻ ՈՒՍՈՒՑԻԶ

որը իրաւունք ունի 5-րդ կարգի, և պարապել է 2 տարի ԱՍՏՐԱԽԱՆԻ Տխական դրպ-րոցում և 1 տարի Երեսիայում: Կամենով և ուսուցչի պաշտօն ունենալ Հայոց Տխա-կան դպրոցներում: Ցանկացողները կարող են դիմել հետևեալ Հասցեով: ВЪ АСТРА-ХАНЬ, учителю Вардану Аветовичу Шелковникову. Большая Исады, домъ Мадатова, у Биржы, № 33 (нижний этажъ). № 89 2—3

ՄԻ ԵՐԵՅԱՍԱՐԴ, ԱՌԱՐՏԵԼՈՎ ՏԵՒԵՆՈՎԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԵՐ, ցանկանում է ունե-նալ Հայոց թեմական դպրոցներից որ և է մէկում կամ ձեւարանում դասեր, գլխաւո-րապէս մաթէմատիկայից: Ցանկալի է, որ դասերի թիւը շարաթական 18-ից աւելի չը լինի: Պայմանների մասին դիմել այս Հասցեով. Шуша, Аракелу Бабаханяну. № 88 4—5

Հարկաւոր է մի ՀԱՅ ԴԱՍՏԻԱՐԱԿԶՈՒՀԻ երկու մանկահասակ որը ե-րեխաների համար Գանձարում: Ցանկացողները կարող են պայմանների մասին տեղեկա-նալ «Մշակ» խմբագրութեան մէջ: № 87 4—5

ՎԵՐԻՆ-ԱՐԴՈՒԼԻՍԻՑ Ս. ՇՄԱՌՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՐԱՒՈՐ Ե ՄԻ ՔԱՀԱՆԱՅԱՑՈՒ, որը աւարտած լինէ ա. Էջմիածնի ձեւարանում կամ Ներսիսեան դպրոցում, գիտենայ և ձայնագրութիւն: Բացի ծխականներից ստացած արդիւնքից, կունենայ և երկսեռ դպրոց-ներում դասեր, կրօնից կամ ուրիշ առարկաներից: Պայմանների համար դիմել Վերին-Ազուլիս, Հայրապետ Արասխանեանցին: № 86 5—5

2011 ՄԱՊՈՐ

ЯИЧНОЕ НУМЕРНОЕ МЫЛО. ГЛИЦЕРИНОВОЕ ВЬСОВОЕ ЯИЧНОЕ МЫЛО.

Ա.ՄԻՈՒՆԵԼՆԵԿ

3—52 (2) № 86

НѢМЕЦКАЯ ГОСТИНИЦА

HOTEL NIEMIECKI, «ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՐԱՆՈՑ» գտնվում է ՎԱՐՇԱՎԱ-ՅՈՒՄ, քաղաքի կենտրոնում նորից վերաշինված, ունի 90 կահավորված նոմերներ-որոնց սարք ու կարգը ամենապա-արտասահմանեան հիւրանոցների սենականներին է նման: Նոմերների գինը 50 կոպէկից մինչև 3 ռուբլի օրական, անկողնով և ծառայով: Հիւրանոցում կայ ընթերցարան-գրադարան, որտեղ ստացվում են Հայերէն, Մշակ և Դոր-Գար՝ լրագիրները, հիւրերի համար անվարձ: Կայ բնօրարան, տեղեֆոն, քաղցրե-դէշներ խանութ, բաղնիքներ:

Հիւրանոցի կառքերը գտնվում են բոլոր երկաթուղային կայարաններում:

(№ 21) 30—130 (2.)

ԴԵՂԱԳՈՐԾ Ա. Ս. ԱՐԻՍՏԱԿԵԱՆԻ ՊԱՀԵՍՏ ԵԻ ՎԱՀԱՌԱՏՈՒՆ գեղերի, մարթին գեղեցկացող և հոտուէտ, նոյնպէս և առող-ջապահական նիւթերի և տնտեսական գործիքների, բացված է Կուկիայում, Վօրոնցովի արձանի հանդէպ, բժշկապետ Նաւասարդեանի առաջին մասն. հիւանդանոցի տակ:

(№ 67) 15—100 (Կ. 2.)